

Շանթե աչքեր, բոցե թելեր մըտածումիս կ'անցնին քովէն.  
Եւ հուրիներ՝ նոր հուլանած ալապաստորը իրենց կուրծքին՝  
Որոնց համար շրթունքներըս անթիւ իղծեր կը թոթովեն:

Որմին վըրայ տրտմութիւն մը կը ցանէ բիլ եղրեւանին,  
Դաշտերուն մէջ 1[1] հարսնուկներու բոսոր իղծերը կը ցամբին.  
Մինչ ես կ'ըմպեմ հաշիշն անյագ ցընորաբեր այս գիշերին:

## 15. ԿԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

Կսկիծ կայ սրտիս մէջը վիրաւոր՝  
Չոր արեւին 1[1] լո՛յսն անգամ չի բուժեր.  
Խորունկ ու ցաւոտ մորմոքում մը որ՝  
Ա՛հ 1[1], պիտի լայննա՛յ երբ իջնէ գիշեր:

Կը հիւծին ցոլքերն լոյսին հեռաւոր,  
Խարոյկի մը պէս՝ որ վաղ է մաշեր 1[1].  
Բայց դեռ կը յուզէ զիս տեսիլք մ'աղուոր՝  
Չոր ինձ կը բերեն անցեալին 1[1] յուշեր:

Ու պիտի ապրի՛մ, վիշտը նոր ուժեր 1[1]  
Կը բերէ յանկարծ հոգւոյս սիրաւեր 1[1],  
Կեանքին կը դառնամ դեռ չըրած գիշեր:

Փուշեր նետուեցան 1[1] օրէ օր վերքիս 1[1],  
Ու հոն հեծեծանք մը բերին հովեր,  
Բայց սիրոյ յոյս մը կ'արեւէ հոգիս:

## 16. ԿԻՐԱԿՍՈՒՄՔ

*“...Եկեալքս ի մտանել արեգականն  
տեսաք վոյս երեկոյիս...”:*

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ...  
Ոսկի թելեր՝ պլլըւած խունկի թաւիշ մըշուշին.  
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծըփուն ձայներ, միստի՛ք վարդ,  
Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք հանդարտ 1[1] կը մաշին:

Խունկի ծարաւ իմ հոգիս կը ծըծէ պահն այս հանդարտ,  
Ոսկեկըրակ աչքերով բուրվառներն երբ կը ճօճին 1[1].